ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

16.10.2021 18:25

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը 2021թ. հոկտեմբերի 15-ին հյուրընկալել էր Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողներին:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցն ուսանողներին ներկայացրել է փաստաբանի դերն արդարադատության համակարգում, փաստաբանի գործառույթները և գործունեության առանձնահատկությունները, փաստաբան դառնալու ընթացակարգը և պայմանները, փաստաբանական դպրոցի և փաստաբանների պալատի գործառույթներն ու կառուցվածքը:

Ուսանողներըշրջել են փաստաբանների պալատի վարչական շենքում, փաստաբանական դպրոցում և հանրային պաշտպանի գրասենյակում՝ անմիջականորեն ծանոթանալով աշխատանքային գործընթացին:

Փաստաբանական դպրոցում ուսանողները ծանոթացել են նաև ընդունելության պայմաններին, կրթական մեթոդներին:

Փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանը ապագա գործընկերներին ներկայացրել է ընդունելության կարգը նշելով, որ ընդունելության և որակավորման քննությունները այնպիսի մեխանիզմով են կառուցված, որ նվազեցված է մարդկային գործոնը, խոսել է նաև փաստաբանական գործունեության առանձնահատկությունների մասին, պատասխանել է ուսանողների հարցերին, որոնք վերաբերվում էին փաստաբանի վարքագծին, փաստաբանի աշխատանքին ու արդար դատաքննության իրականացմանը:

Հանրային պաշտպանի գրասենյակում շրջայցի ընթացքում ուսանողները ծանոթացել են հանրային պաշտպանների գործունեությանը, դատական գործերում նրանց կողմից ներկայացուցչություն կամ պաշտպանություն իրականացնելու պայմաններին, ընդգծվել է հանրային պաշտպանների կողմից մարդկանց իրավունքները պաշտպանելու կարևորությունը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })